# ՄՈՆԻՏՈՐԻՆԳ և ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (ՏԶՀԿ)

WWW.EDRC.AM

Պարունակում է նյութեր և մեջբերումներ «Ազդեցության գնահատումը գործնականում» գրքից, (ՀԲ, Վաշինգտոն)

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Բարձրացնել ՄևԳ շրջանակների և ծրագրերի մշակման համար կիրառվող հասկացությունների վերաբերյալ մասնակիցների գիտելիքները
- Մասնակիցների փոխանցել ծրագրերի ՄևԳ պլանների նախագծման և մշակման կարողություններ

# ՕՐԱԿԱՐԳ

1 Արդյունքների վրա համաշխարհային ուշադրություն

2 Մոնիտորինգ և գնահատում

3 Արդյունքների շղթայի կիրառում

4 Մոնիտորինգի և գնահատման շրջանակ

5 Տվյալների հավաքում



# ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արդյունքների վրա հիմնված կառավարումը համաշխարհային միտում է: Սա նաև դոնորների համար հիմնական ուղղությունն է:

- Ի՞նչն է նոր արդյունքների առումով:
  - Կառավարիչները գնահատվում են իրենց ծրագրերի կատարողականի հիման վրա, այլ ոչ թե օգտագործվող ռեսուրսների վերահսկման հիման վրա: (Ուշադրությունը տեղափոխվել է ռեսուրսներից դեպի վերջնական արդյունք):
  - Ստեղծվում են կապեր մոնիտորինգի և գնահատման, քաղաքականության մշակման և բյուջեների միջև:
  - Որոշիչ են հանրային հատվածի արդյունավետ կառավարման հարցում:



Պիտեր Դրյուկեր:. Արդյունքների վրա հիմնված կառավարումը արդյունքներն է դարձնում ծրագրի առանցքը: *Այն ոչ թե զուտ կառավարչական գործիք է, այլ ավել լայն մտածելակերպ կամ վերաբերմունք:*

# ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Փարիզի դեկլարացիա և Աքքրայի Գործոցությունների օրակարգ (2008). Հինգ հիմնարար դրույթներ առավել արդյունավետ դարձնելու համար

1. **Սեփականության զգացողությունը.** Զարգացող երկրները սահմանում են իրենց սեփական ռազմավարությունները աղքատության կրճատման, հաստատությունների բարելավման և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում:
2. **Աջակցում.** Դոնոր երկրները աջակցում են այդ նպատակներին և օգտագործում տեղական համակարգերը:
3. **Ներդաշնակեցում.** Դոնոր երկրները համակարգում են, պարզեցնում կանոնակարգերը և կրկնություններից խուսափելու նպատակով տրամադրում տեղեկատվություն:
4. *Արդյունքներ. Զարգացող երկրները և դոնորները ուշադրություն են դարձնում զարգացման արդյունքներին, որոնք սկսում են չափվել*
5. **Փոխադարձ հաշվետվողականություն.** Դոնորները և գործընկերները հաշվետու են զարգացման արդյունենքրի համար:





# Ի՞ՆՉ Է ՄևԳ

- Մոնիտորինգը և գնահատումը փաստերի հիման վրա քաղաքականությունների իրականացման հենքն են:
- Դրանք ապահովում են այն հիմնական գործիքները, որոնք շահագրգիռ կողմերը կարող են օգտագործել իրականացման տարբեր փուլերում միջամտությունների որակը, արդյունավետությունը և համապատասխանությունը ստուգելու և բարելավելու համար:
- Երկու գործընթացներն էլ կառավարչական գործիքներ են, սակայն տարբերվում են իրենց բնույթով և կիրառվում են ծրագրերի տարբեր փուլերում:

# MONITORING vs EVALUATION

| | Մոնիտորինգ | Գնահատում |
|---|---|---|
| Հաճախա-կանություն | Կանոնավոր, շարունակական | Պարբերաբար |
| Ծածկույթ | Բոլոր ծրագրերը | Ընտրված ծրագրեր կամ բաղադրամասեր |
| Տվյալներ | Համընդհանուր | Ընտրանքի հիման վրա |
| Տեղեկատ-վության խորություն | Հետևում է իրականացմանը, պատասխանում է ԻՆՉ հարցին | Ուղղված է հաճախ կատարողականությանը և ազդեցությանը. ԻՆՉՈՒ |
| Ծախս | Ծախսերը բաշխվում են | Կարող է շատ բարձր լինել |
| Օգտակա-րություն | Ծրագրերի և կառավարման շարունակական բարելավում | Ծրագրերի վերաբերյալ խոշոր որոշումներ |



# ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

“Տեղեկատվության հավաքման և վերլուծության շարունակական գործընթաց, որի նպատակն է՝

- համեմատել, թե ինչքանով է իրականացվում ծրագիրը կամ քաղաքականությունը ակնկալվող արդյունքների համեմատ, և
- Տեղեկանալ ծրագրի իրականացման և կառավարման հարցերին:”

# ԳՆԱՀԱՏՈՒՄ

Իրագործվող կամ ավարտված ծրագրի կամ քաղաքականության, դրա մշակման, իրականացման և/կամ արդյունքների սիստեմատիկ և օբյեկտիվ գնահատում:

- Որոշել նպատակների ձեռքբերման և համապատասխանության աստիճանը, արդյունավետության, ազդեցության և երկարաժամկետ կայունության զարգացումը,
- Քաղել դասեր, որոնք տեղեկատվություն կապահովեն որոշումների կայացման համար,
- Հիմնական հարցերին համապատասխանության ապահովում:



# ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- Փոփոխության տեսությունը նկարագրում է, թե ինչպես պետք է միջամտությունը հասնի ցանկալի արդյունքների:
- Այն նկարագրում է այն պատճառների տրամաբանությունը, թե ինչպես կամ ինչու տվյալ ծրագիրը կամ քաղաքականությունը պետք է հասնի նախատեսված վերջնական արդյունքներին:
- Փոփոխության տեսությունը կարելի է մոդելավորել տարբեր եղանակներով, օրինակ, օգտագործելով
- Տեսական մոդելներ, տրամաբանական մոդելներ, տրամաբանական շրջանակներ (log frame), վերջնական արդյունքի մոդելներ և արդյունքների շղթաներ:
- Արդյունքների շղթաները հաճախ ամենապարզ և հստակ մոդելն է, որն ուրվագծում է փոփոխության տեսությունը զարգացման ծրագրերի գործառական համատեքստում:

**Մուտքեր/ռեսուրսներ** → **Գործողություն-ներ** → **Ուղղակի արդյունքներ** → **Վերջնական արդյունք** → **Երկարաժամկետ վերջնական արդյունքներ/ Բարձր մակարդակի նպատակներ**

- **Մուտքեր/ռեսուրսներ**: Ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսներ գործողությունները իրականացնելու համար:
  - Բյուջե
  - Աշխատակազմ
- **Գործողություն-ներ**: Գործողություններ, որոնց միջոցով ռեսուրսները ձևափոխվում են հստակ արդյունքների:
  - Վերապատ-րաստում
  - Ուսումնասի-րություններ
  - Շինարարու-թյուն
- **Ուղղակի արդյունքներ**: Ծրագրի ար-դյունքներ, որոնք գտնվում են իրա-կանացնողի վե-րահսկողության տակ

  ԱՌԱՋԱՐԿ
  - Վերապատրաս-տումների ծրագրի ավարտում
  - Փողի փոխանցում
  - Ճանապարհը կառուցված է
  - Դպրոցի շենքը կառուցված է
- **Վերջնական արդյունք**: Ուղղակի արդյունք-ների օգտագործում շահառուների կող-մից, որոնք իրակա-նացնողի վերահսկո-ղությունից դուրս են:

  ՊԱՀԱՆՋԱՐԿ
  - Նոր պրակտիկայի ընդունում
  - Ճանապարհի օգտա-գործում
  - Դպրոցի հաճա-խումների ավելացում
  - Բժշկական ծառայու-թյունների օգտա-գործման ավելացում
- **Երկարաժամկետ վերջնական արդյունքներ/ Բարձր մակարդակի նպատակներ**: Փոփոխություններ վերջնական արդյունքներում, որոնց վրա տարբեր գործոններ են ազդում:
  - Աղքատության կրճատում
  - Եկամտային անհա-վասարության կրճատում
  - Աշխատուժի ար-տադրողականու-թյան բարձրացում

Իրականացում | Արդյունքներ

Արդյունքների վրա հիմնված կառավարում

# ՕՐԻՆԱԿ 1: ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՇՂԹԱ

| | Գործողություն-ներ | Ուղղակի արդյունքներ | Վերջնական արդյունք | Երկարաժամկետ վերջնական արդյունք |
|---|---|---|---|---|
| **Կրթություն** | ○ Ուսուցիչների վե-րապատրաստում<br>○ Դասագրքերի մշակում | ○ Ուսուցիչները վերապատրաստվել են նոր մեթոդներով<br>○ Դասագրքերը մատակարարված են | ○ Նոր մեթոդները կիրառվում են<br>○ Շրջանավարտների ավելացած կշիռ | ○ Թեստերի բարելավված արդյունքներ<br>○ Աշատուժի բարելավված արտադրողա-կանության |
| **Առողջապա-հություն** | ○ Բժիշկների վարձում<br>○ Ծննդօգնության մասնագետների վերապատրաս-տում | ○ Նոր բժիշկներն աշխատում են<br>○ Մասնագետները կիրառում են նոր մեթոդները | ○ Ծննդօգնության համար հիվանդանոցների օգտագործման ավելացում | ○ Մայրամահա-ցության բարելավված ցուցանիշներ |
| | ○ Վերապատրաստո | ○ Վերապատրաստումն | ○ Սննդի սպառման | |

## ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ

- Մոնիտորինգի հարցերը
  - Ի՞նչ է արվում:
  - Ու՞մ կողմից:
  - Նպատակային բնակչությունը:
  - Ե՞րբ:
  - Ինչպե՞ս:
  - Ի՞նչ հաճախականությամբ:
  - Լրացուցիչ ուղղակի արդյունքներ:
  - Օգտագործված ռեսուրսներ (աշխատակիցներ, գումար, նյութեր և այլն)






## ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ

- Գնահատման հարցերը
  - Արդյո՞ք միջամտության կամ գործողության բովանդակությունն իրագործվում է համաձայն պլանի:
  - Արդյո՞ք միջամտության բովանդակությունն արտացոլում է համապատասխան ստանդարտները:
  - Արդյո՞ք միջամտությունը հասավ սպասված արդյունքներին:
  - Ի՞նչ է մեզ պետք այս հարցերին պատասխանելու համար:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ, որպեսզի չափենք



## ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- «Օգնում են չափել առաջընթացը դեպի նպատակներ»
- Ցուցանիշները տարբերվում են նպատակներից նրանով, որ դրանք հստակ չափանիշ են տալիս ծրագրի հաջողության վերաբերյալ :
- Տիպեր
  - Ռեսուրսներ/գործընթացներ (մոնիտորինգ)
  - Վերջնական արդյունք/Ազդեցություն (գնահատում)

**S** հստակ
**M** չափելի
**A** վերագրելի
**R** իրատեսական
**T** նպատակադրված



## ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՈՒՄ

- Որոշել, թե ինչ տվյալներ են անհրաժեշտ
- Որոշել, թե ինչպես պետք է հավաքվեն դրանք
- Որոշել, թե ով է պատասխանատու տվյալների հավաքման և ներկայացման համար
- Որոշել, թե երբ պետք է տվյալները հավաքվեն և ներկայացվեն, ներառյալ ինչ հաճախականությամբ, սկզբնական, միջանկյալ և վերջնական տվյալների հավաքման ժամկետները
- Բացահայտել ծախսերը և ֆինանսավորման աղբյուրները
- Մշակել ՄևԳ շրջանակ

| | Ցուցանիշ | Սահմանում<br>Ինչպե՞ս է այն հաշվարկվում: | Սկզբնական մակարդակ<br>Ներկայիս արժեք | Թիրախ<br>Թիրախային մեծություն | Տվյալների աղբյուր<br>Ինչպես պետք է չափվի | Հաճախականություն<br>Ինչքա՞ն հաճախ պետք է չափվի | Պատասխանատու<br>Ո՞վ պետք է չափի | Հաշվետվություն<br>Որտե՞ղ է դա ներկայացվելու |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Արդյունք** | Ավարտական դասարանի շրջանավարտների ավագ դպրոց ընդունվելու տոկոսը | Ավագ դպրոց ընդունված աշակերտների քանակը՝ բաժանած նախորդ դասարանի շրջանավարտների քանակի վրա՝ բազմապատկած 100-ով | 50% | 60% | Տարրական և ավագ դպրոց ընդունման տվյալներ | Տարեկան | Ծրագրի ղեկավար | Տարեկան ընդունման հաշվետվություններ |
| **Վերջնական արդյունք** | Ավարտական դասարանի աշակերտների կարդալու սահունությունը | Ընթերցանության թեստի գնահատականները ավարտական դասարանում՝ բաժանած աշակերտների քանակի վրա | Միջինը՝ 47 | Միջինը՝ 57 | Ընթերցանության թեստեր | Յուրաքանչ յուր 6 ամիսը մեկ | Ուսուցիչներ | Ուսուցիչների կիսամյակային հաշվետվություններ |
| **Ուղղակի արդյունք** | Ամառային ընթերցանության ճամբարի աշակերտների քանակը | Առաջին և վերջին օրը ներկա աշակերտների ընդհանուր քանակը | 0 | 500 | Ամառային ճամբարի հաճախումների մատյան | Յուրաքանչ յուր ճամբարի ավարտին | Teachers | Ճամբարի հաշվետվություն |
| | Ծնողների քանակը, որոնք օգնում են իրենց երեխաներին վերջին շաբաթում կարդալու հարցում | Դրական պատասխան տված ծնողների ընհանուր քանակը: | 0 | 500 | Ծնողների հարցում | Յուրաքանչ յուր ճամբարի ավարտին | Ծրագրի մասնագետ | Հարցման հաշվետվություն |

ECONOMIC DEVELOPMENT RESEARCH CENTER
EDRC

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

WWW.EDRC.AM

WWW.FACEBOOK.COM/EDRC.ARMENIA